



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՏՏՎԱԿՐԻՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՏՏՎԱԿՐԻՑՄԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ОГО ВЕКА**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

## Հրապարակվում է ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

## **ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀԵՐԴԻ ՆԱԽԱԳԱհ՝**

## ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ <ՊՏՀ< ուեկյոր, պ.գ.դ., այրոֆեսոր

## **ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐԻՈՒԹԵԴ**

- |                           |   |
|---------------------------|---|
| <b>ԴԻԱՍԱ ԳԱԼՈՅԱՆ -</b>    | ՀՊՏՀ միջազգային դրվեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դր.գ.դ., դրցենք |
| <b>ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ -</b> | ՀՊՏՀ բնօգդագործման դրվեսագիլուրային ամբիոնի վարիչ, դր.գ.դ., պրոֆեսոր        |
| <b>ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և առողջիկի ֆակուլտետի դեկան, դր.գ.դ., պրոֆեսոր  |
| <b>ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ գիլուրային և ասպիրանտուրայի բաժնի պետ, դր.գ.թ., դրցենք                 |
| <b>ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ -</b> | ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, դր.գ.դ., պրոֆեսոր                            |
| <b>ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ գրանցության և փոխարքության պատմի պետ, դր.գ.թ., դրցենք                  |
| <b>ՅՈՒՐԻ ՍՈՒԿԱՐՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., դր.գ.դ., պրոֆեսոր              |
| <b>ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ -</b>  | ՀՊՏՀ պրոռեկտոր, դր.գ.դ., պրոֆեսոր   |

ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
S 778 հնարավորություններ: <ՊՏԾ< 27-րդ գիտաժողովի նյութեր / <ՊՏԾ<: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տարբերակ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիրաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորին Հայաստանի պետական գյուղեսագիրական համալսարանի 27-րդ գիրաժողովի բացման առթիվ և ցանկանում են շնորհակալություն հայրնել գիրաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել գյուղեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակ հարցերի նկարմամբ:

Մեր համալսարանի գործադրության մեջ նշանակած է գյուղական գիրաժողովները գեղեցիկ պահպանությամբ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիրական գործունեությունն արդացողություն այլ ձևաչափեր նույնականացնելու համար: Հայարդությամբ եմ նշում, որ հետազողական համալսարան դառնալու և մեր պետության գյուղեսական կյանքին մասնագիրական մասնակցություն ունենալու իմ գեղականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազողական կենտրոնի գործունեությունն այսօր դաշտի է նշանակալի արդյունքներ. այսպես ոչ միայն իրականացվում են հանրապետության գյուղեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազողություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ գործադրությամբ կազմակերպումը գիրական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական գործեց գիրառուսումնական լարորագորիաների մեջնարկը, ինչը գիրական դրամաշնորհներ, գիրառուսումնական խմբեր և գիրահետքազողական կյանքի աշխատավայր միրված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոդելումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի գործադրությունը եւ հավելապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիրական ներուժը, ցոյց դա համալսարանում գիրական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիրաժողովի հիմքում գյուղեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցոյց են դնում մեր դարաշրջանի մարդասիրավերներն ու հնարավորությունները: Խսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չեն պարբեր թողնեն գյուղեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ գյուղեսության:

Հուսով եմ, որ գիրաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կրա մասնագետներին ներկայացնելու իրենց մոդելումները, բացահայտելու գիրաժողովի խորագրում արդացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխատությամբ եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկուր, պրոֆեսոր

ZOYA STEPANYAN

## ARMENIAN HIGHLANDS AS THE HOMELAND OF THE INDO-EUROPEAN LANGUAGE

*Key words:* language, homeland, linguists, linguistics, philosophy

*Though there is a predominating opinion that the original homeland of the Indo -European people was in Europe, most scientists have occasionally referred to the Advanced Asia as their original homeland.*

*The basis of the European version of the original homeland of the Indo-European language collapsed when the studies showed that the original settlement of the bearers of the Indo-European language was a mountainous country. This doesn't correspond to the European territory that scientists tried to introduce as the homeland of the language.*

*In fact, the epoch of the existence of the Indo-European original population goes back to the ancient times.*

*And when did the disconnection start? Some of the scientists think that the earliest separation must have begun since VI-V millenniums BC, others think in the IV millennium. Thus the origin of the Armenian language and the Armenians goes back to VI-IV millenniums.*

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՊՈՅԱՆ

Տնտեսագիրության թեկնածու, դոցենտ, <ՊՏՏՀ>

### ՆԱԽԱ ՊԱՊՈՅԱՆ

Ասիստենտ, <ԱԱՀ>

## ԼՈԳԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

*Հիմնաբառեր.* մարդակարարման-արդադրական-բաշխման համակարգեր, լոգիստիկական համակարգ, գործառնությունների և նյութական հոսքերի կառավարում, լոգիստիկական սպորադանումներ, գեղեկապրական լոգիստիկա, բաշխման լոգիստիկա, շուկայի իրավիճակ, լոգիստիկական համակարգի օղակ, ուղղակի կապեր, պաշարների կառավարում:

*Հողվածում նշվում է մարդակարարման-արդադրական-բաշխման համակարգերի ինքեզրման անհրաժեշտության և այդ ինքրի լուծման գործում լոգիստիկ մոդելների ու նշանակության մասին: Վերջինիս արդյունավետ գործունեության ուղղություննե-*

թից առանձնացվել են. ապրանքներն արդադրողներից և մարդակարարներից սպառման վայրեր հասցնելու հետ կապված գործառնությունների կառավարումը, պահանջարկի և առաջարկի կողրդինացումը, անհրաժեշտ մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, լոգիստիկ շթայի օղակների միջև անհրաժեշտ գեղեկադրվության փոխանակումը և գեղակադրվական հոսքերի կողրդինացումը, մարդակարարումների անխափան իրականացումը համապատասխան դրանսպորտային միջոցներով, ապրանքանյութական պաշարների պահպանման ծախսերի կրճադրումը և այլն:

Եվրոպական մի շաբթ երկրներում դեռևս 1925-30-ական թվականներին, հատկապես տնտեսական ճգնաժամի տարիներին, ոլորտի մասնագետների մոտ մտահղացում առաջացավ ինտեգրել մատակարարման-արտադրական-բաշխման համակարգերը, որոնցում պետք է փոխկապակցվեին հումքի և նյութերի մատակարարման, արտադրանքի թողարկման, դրա պահպանման և բաշխման գործառույթները: Սակայն գործնականում նշված մտահղացման իրականացումը դարձավ շատ դժվար՝ կապված բազում խնդիրների և դժվարությունների հետ: Հետազոյւմ այն հնարավոր դարձավ միայն լոգիստիկ մոտեցման շնորհիվ, երբ վերը նշված համակարգերը հանդիսացան լոգիստիկ շղթայի օղակներ:

Լոգիստիկական համակարգում կարելի է առանձնացնել գործունեության երկու հիմնական ուղղություններ: Դրանցից մեկը վերաբերում է ապրանքներն արտադրողներից և մատակարարներից սպառման շրջաններ հասցնելու հետ կապված բոլոր գործառույթների կառավարմանը, իսկ մյուսը ներառում է շուկայի վերլուծությունը, ապրանքների ու ծառայությունների պահանջարկի և առաջարկի կողրդինացումը, ինչպես նաև ապրանքաշարժի գործընթացի մասնակիցների շահերի ներդաշնակեցումը: Քանի որ լոգիստիկան կառավարում է նյութական հոսքերը դրանց սկզբնադրյուլներից մինչև վերջնական սպառողներ՝ նվազագույն ծախսերով իրականացնելով ապրանքաշարժը և դրան առնչվող տեղեկատվական հոսքը, ուստի դժվար չէ ենթադրել, որ լոգիստիկական շղթայի գործունեությունը պետք է ուղղված լինի շուկայի պահանջների առավել լրիվ բավարարմանը: Դրա համար մեծ կարևորություն է ձեռք բերում շուկայի պահանջների և բնակչության պահանջարկի ուսումնասիրումն ու կանխատեսումը, որոնք հանդիսանում են մարքեթինգի հիմնական գործառույթներ: Լոգիստիկան, լինելով սերտ կապի մեջ մարքեթինգի հետ, իրականացնում է ավելի շատ գործառույթներ, լուծում ավելի շատ խնդիրներ, քան մարքեթինգը: Պատահական չէ, որ տարբեր երկրների շատ ֆիրմաներ վերջին տարիներին մարքեթինգի ծառայության բազայի վրա ստեղծում են լոգիստիկական ստորաբաժանումներ: Լոգիստիկ շղթայի կողմից իրականացվող աշխատանքների շարքում առաջին հերթին պետք է նշել լոգիստիկ շղթայի օղակ հանդիսացող կազմակերպությունների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանցման տեղեկատվական հոսքերի կողրդինացման մասին, որի արդյունքում դրանք միավորվում են միասնական նպատակների և խնդիրների համակարգի մեջ՝ նպատակ հետապնդելով նվազագույնի հասցնել կատարված ծախսերը: Որպեսզի տեղեկատվական գործունեության վերլու-

ծովագունը լոգիստիկ շղթայում լինի արդյունավետ, անհրաժեշտ է լոգիստիկական համակարգը դիտարկել որպես լոգիստիկական ենթահամակարգերի համակցություն, որը տեղեկատվական լոգիստիկան դարձնում է որպես մեկ ամբողջություն: Տեղեկատվական լոգիստիկական համակարգի ծևավորման համար անհրաժեշտ է կառուցել այնպիսի համակարգի մոդել, որտեղ լոգիստիկական կառուցվածքի էական բաղադրիչ է հանդիսանում առաքումներին, արտադրությանը, իրացմանը և պաշաներին, ինչպես նաև դրանց համակցությանն ու կոորդինացմանը վերաբերող տեղեկատվական համակարգը: Լոգիստիկայի տեղեկատվական ապահովումը պահանջում է նաև համապատասխան ծրագրային ապահովում, որի օգնությամբ ամբողջ լոգիստիկական համակարգը կաշխատի որպես մեկ ամբողջություն: Տվյալ պարագայում գլխավոր խնդիր է համարվում բոլոր ստորաբաժանումների միավորումը ստեղծվող ենթակառուցվածքի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում պատշաճ մակարդակի կապ ապահովել կառավարման գործընթացի մասնակիցների միջև: Լոգիստիկական համակարգի գործունեության արդյունավետությունը մեծ չափով կախված է շուկայի պահանջներին համապատասխան թողարկված արտադրանքի իրացման կազմակերպման մակարդակից, որն ապահովում է լոգիստիկական ընդհանուր համակարգի մաս հանդիսացող բաշխման լոգիստիկան: Այն որպես համակարգ ծևավորվել և սկսել է գործել 20-րդ դարի վերջերին՝ կապված արտադրության ընդլայնման, նոր պահանջմունքների բավարարման անհրաժեշտության, ներքին և արտաքին տնտեսական կապերի բարդացման հետ: Նշված գործոնների ազդեցության մեծացումը նոր պահանջներ ներկայացրեց բաշխման լոգիստիկայի կատարելագործմանը: Այն պետք է դառնար արտադրության համակարգի բաղկացուցիչ մաս և ուղղված լիներ սպասարկվող գոտու սպառողների բազմազան պահանջմունքների ու ցանկությունների առավել լրիվ բավարարմանը: Դրա համար կապերի զարգացումը լոգիստիկական համակարգի մյուս տարրերի հետ դարձավ բաշխման լոգիստիկայի առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը: Դրա լուծման գործում իր ուրույն տեղն ուներ մարքեթինգը և պատահական չէր, որ 21-րդ դարի սկզբներին սկսեցին մեծ ուշադրություն հատկացնել լոգիստիկայի և մարքեթինգի սերտաճմանը: Բաշխման լոգիստիկայի ամբողջական ռազմավարության մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական խնդիրներ:

- շուկայի պահանջների և բնակչության պահանջարկի ուսումնասիրում ու կանխատեսում, որն, ի դեպք, հանդիսանում է մարքեթինգի հիմնական գործառությներից մեկը,
- միջացառումների ձեռնարկում ու համապատասխան մեթոդների ընտրություն՝ միտված շուկայի պահանջների և բնակչության պահանջարկի առավել լրիվ բավարարմանը: Քանի որ ժամանակի ընթացքում բավականին արագ է փոփոխվում շուկայի իրավիճակը, ուստի դրանք մշակվող պլաններում արտացոլելու համար պետք է կատարել համապատասխան կանխատեսումներ տարբեր մեթոդների և մոդելների օգնությամբ:

Շուկայի իրավիճակի թեկուզ աննշան փոփոխությունների հաշվառումը և անհրաժեշտ միջոցառումների իրականացումը լոգիստիկ շղթայի արդյունավետ գործունեության

ապահովման հիմնական խնդիրներից մեկն է: Դրա լուծումը հնարավոր է դառնում միայն տեղեկատվական հոսքերի արդյունավետ կազմակերպման և տեղակատվական լոգիստիկայի համակարգի անխափան գործելու դեպքում: Արտադրական ֆիրմաների գործունեությունը (հատկապես լոգիստիկական համակարգում) ապրանքների իրացման շուկաների ուսումնասիրման գծով հիմնվում է ոչ միայն արդեն թողարկվող ապրանքների իրացման վերլուծության, այլև նոր արտադրատեսակների ստեղծման հիմնախնդրի արդյունավետ լուծման վրա, որոնց շուկա դուրս բերման շնորհիվ հնարավոր կրառնա շուկայի պահանջների առավել լրիվ բավարարումն ու առավելագույն շահույթի ստացումը: Մյուս կողմից, պետք է բացահայտել, թե շուկա նոր դուրս բերված ապրանքներն ինչպիսի փոփոխություններ կառաջացնեն մինչ այդ թողարկվող ապրանքների (հատկապես նմանատիպ սպառողական հատկանիշներ ունեցող) նկատմամբ ձևավորված պահանջարկում: Լոգիստիկական համակարգի օղակ հանդիսացող արդյունաբերական ֆիրմայի տնտեսական քաղաքականության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արտադրության տեխնոլոգիական բազայի զարգացման ռազմավարության համապատասխանեցումն իրացման արդյունքների հետ, որը հնարավորություն կտա արտադրությունը համապատասխանեցնել շուկայի արագ փոփոխվող պահանջներին: Խոսքը մասնավորապես վերաբերում է իրենց կենսապարբերաշրջանի անկման փուլում հայտնված արտադրատեսակներին, որոնք արտադրությունից և վաճառքից հանելուց հետո պետք է շուկա դուրս բերվեն ավելի կատարյալ սպառողական հատկանիշներ ունեցող ապրանքներ: Նշված խնդրի լուծման գործում մեծ է նաև լոգիստիկ շղթայի օղակ հանդիսացող մանրածախ առևտրական կազմակերպությունների դերը, որոնք համապատասխան տեղեկատվություն պետք է փոխանցեն իրենց գործընկեր հանդիսացող արտադրական ֆիրմային: Թողարկված ապրանքները սպառման շրջաններ հասցնելու ուղիների ընտրությունը հանդիսանում է բաշխման լոգիստիկայի հիմնական խնդիրներից մեկը, որի լուծման ժամանակ պետք է որոշել բաշխման ուղիների մակարդակների թիվը: Վերջինս որոշվում է արտադրողի և սպառողի միջև գործող միջնորդ կազմակերպությունների թվով: Շատ դեպքերում լոգիստիկական համակարգերում օգտագործվում է բաշխման ուղղահայց ուղիները, որոնք բաղկացած են արտադրողից և մեկ կամ մի քանի միջնորդներից, որոնք գործում են որպես մեկ միասնական համակարգ: Լոգիստիկական շղթայում խափանումների առաջացումն իր բացասական ազդեցությունն է թողնում լոգիստիկական ամբողջ համակարգի վրա: Խոսքը հատկապես վերաբերում է ապրանքանյութական արժեքների մատակարարումների խափանումներին, ուստի դրանց շարժի վրա հսկողությունը պետք է հանդիսանա խիստ ուշադրության հիմնական օբյեկտ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մատակարարումների անխափան իրականացման գործում մեծ է տրանսպորտի դերը, որը կարևոր օղակ է հանդիսանում լոգիստիկական համակարգում: Տրանսպորտը պետք է բավականին ճկուն լինի, որպեսզի ապահովի փոխադրումների իրականացումը, որոնք նույնիսկ կարճ ժամանակահատվածում ենթակա են փոփոխությունների՝ կապված շուկայի իրավիճակի փոփոխության հետ: Այլ կերպ ասած, լոգիստիկ շղթայի օղակ հանդիսացող տրանսպորտային կազմակերպությունը ցանկացած պահի

պետք է իր գործոնեռությունը լիովին և արագ համապատասխանեցնի փոփոխվող պայմաններին: Նշված պահանջներին համապատասխանող կազմակերպություններ դարձան բեռների հավաքագրման և բաշխման ռեգիոնալ տրանսպորտային ընկերությունները, որոնք ունակ էին հավաքագրման կետերում բեռները կոմալեկտավորել և կարճ ժամանակամիջոցում առաքել հասցեատիրոջը: Տվյալների փոխանակության շնորհիվ հնարավոր է փոփոխվեն բեռների ծավալը և առաքման ժամկետները, երթուղին, բեռների խմբաքանակը և այլ պայմաններ: Բեռների հավաքագրման և բաշխման առավել կատարելագործված միջոցներին են վերաբերում խառը կոնտեյներային երթուղային փոխադրումները տարբեր ուղիներով, ինչպես նաև բեռների միջոնեգիոնալ փոխադրումներն ավտոմոբիլային տրանսպորտով մոտ հազար կիլոմետր հեռավորության վրա: Ավտոտրանսպորտային ընկերությունները, որոնք իրականացնում են բեռների միջոնեգիոնալ փոխադրումներ խոշոր խմբաքանակներով, նախապես համախմբում են բեռների միջոնեգիոնալ փոխադրումներ խոշոր խմբաքանակներով, նախապես համախմբում են բեռները հավաքագրման կետերում, դրանք բաշխման տեղերում բաժանում են փոքր խմբաքանակների և հասցնում սպառողներին: Նշված միջոցի հիմնական առավելությունն այն է, որ մատակարարումները համապատասխանեցվում են տվյալ պահին ներկայացված պահանջներին, քանի որ ավտոտրանսպորտային ընկերությունները հսկում են մեքենաների աշխատանքը և դրանք շահագործում «ճիշտ ժամանակին» համակարգով: Վերը նշված միջոցի թերությունը կայանում է նրանում, որ ավտոտրանսպորտային ընկերությունների մեծ մասն ունի մեքենաների սահմանափակ քանակ (50 և ավելի քիչ մեքենաներ), որի հետևանքով նրանք կախվածության մեջ են ընկնում խոշոր գործընկերներից: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել լոգիստիկական համակարգեր ծևավորելիս, քանի որ «ճիշտ ժամանակին» համակարգով շահագործման ողջ պատասխանատվությունը լոգիստիկական շղթայում ընկնում է նրանց վրա, ինչով էլ, ըստ էության, մեծ չափով պայմանավորված է լոգիստիկական համակարգի արդյունավետ գործունեությունը: Ներկա պայմաններում լոգիստիկական համակարգում գործող օղակների անմիջական կապերն էլեկտրոնային միջոցների օգնությամբ բազմազան են: Ուղղակի կապը կողմերի միջև ոչ միայն արագացնում և օպտիմալացնում է պաշարների շարժը, պատվերների կատարման ժամանակը, այլև հեշտացնում է ապրանքանյութական պաշարների կառավարումը՝ կրճատելով ու նվազեցնելով պատվերների կատարման և պաշարների պահպանման ծախսերը, որով էլ մեծ չափով պայմանավորված է լոգիստիկական համակարգերի արդյունավետությունը: Լուրջ հիմնախնդիր է հանդիսանում ժամանակի միավորի ընթացքում ստեղծված (առաջացած) շահույթի բաշխումը լոգիստիկ շղթայի օղակ հանդիսացող կազմակերպությունների միջև:

Լոգիստիկայի զարգացումը տարբեր երկրներում և ֆիրմաներում գտնվում է տարբեր մակարդակներում: Գոյություն ունեն առանձին սկզբնական փուլեր, որոնցով պետք է անցնի լոգիստիկան, որպեսզի այն հասնի զարգացման բարձր մակարդակի: Լոգիստիկայի զարգացման առաջին փուլի համար հատուկ են մի շարք գործառույթների իրականացում՝ պատրաստի արտադրանքի պահպանման կազմակերպում, առաքումների իրականացում և տրանսպորտավորում, ապրանքաշարժի ռացիոնալ ուղիների ընտրություն և

այն, առանց որոնց հնարավոր չէ լոգիստիկաի զարգացման հետագա փուլերի իրականացումը: Այս առումով պետք է նշել, որ <<-ում առկա են լոգիստիկ համակարգերի ծևավորման ու հետագա զարգացման բոլոր նախադրյաները: Լոգիստիկական համակարգերի ծևավորումը հանրապետությունում կիանգեցնի ոչ միայն տեղի լոկալ խնդիրների արդյունավետ լուծմանն, այլև կնպաստի տարբեր ինտեգրացիոն միություններում գործող ֆիրմաների հետ գլոբալ լոգիստիկ շղթաների ծևավորմանն ու առկա տնտեսական կապերի /գործունեության/ արդյունավետության բարձրացմանը: Խոսքը մասնավորապես վերաբերում է ԵՏՄ անդամ երկրների միջև նման համակարգերի ծևավորմանն ու զարգացմանը: Դրան նպաստում են քաղաքական համակարգերի, բնակչության կենսածի, ավանդույթների նմանությունը, պատմական արմատների մոտիկությունը, էներգետիկ և հումքային ռեսուրսների միասնական աղբյուրներից օգտվելու պրակտիկան, հաղորդակցության ուղիների փոխադարձ կապը, առևտրական և մաքսային խոչընդոտների բացակայությունը և այլն: Դրա հետ մեկտեղ աճի նոր ռեզերվների ի հայտ բերումը և մրցակցության սրում անհրաժեշտություն են առաջացնում ձեռք բերել իրացման նոր շուկաներ, հումքի էժան աղբյուրներ, աշխատանքային ռեսուրսներ՝ իրենց երկրի սահմաններից դուրս: Պատահական չէ, որ աշխատանքի միջազգային բաժանումը և կոռացրացումը բերեցին մեծ թվով վերազգային ընկերությունների ստեղծմանը, որոնք իրենց բիզնեսում օգտագործում են գլոբալ լոգիստիկական շղթաներ և ուղիներ:

## ПАПОЯН АРУТЮН, ПАПОЯН НАНА

### НЕСКОЛЬКО ВОПРОСОВ О ДЕЯТЕЛЬНОСТИ ЛОГИСТИЧЕСКИХ СИСТЕМ

**Ключевые слова:** системы снабжения-производства-распределения, логистическая система, управление операциями и материальными потоками, логистические подразделения, информационная логистика, логистика распределения, рыночная ситуация, логистическая система, прямые подключения, управление ресурсами

В статье указывается о необходимости интеграции системы “снабжение-производство-распределение” и в связи решением этой задачи о роли и значений логистического подхода. Для эффективной деятельности такого подхода указаны следующие направления: управление функции, связанные с передвижением товаров от производителей и снабженцев на места их потребления, координация спроса и предложения, проведение необходимых маркетинговых исследований, объем необходиомой информации между звеньями логистической системы и координации информационных потоков, организация бесперебойных снабжений соответствующими транспортными средствами, сокращение расходов содержания товарных запасов и т.д.

**PAPOYAN HARUTYUN,  
PAPOYAN NANA**

## **MORE QUESTIONS OF EFFECTIVE ACTIVITY OF LOGISTIC SYSTEMS**

*Key words:* *supply-production-distribution systems, logistics system, operation and material flow management, logistics units, information logistics, distribution logistics, market situation, logistics system, direct connections, resource management.*

*The article notes the need for the integration of production-supply-distribution systems and the role and importance of logistics approach to solving that problem. The effective functioning of the priorities identified are: consumer goods manufacturers and supplies to the places associated with the management operations, coordination of supply and demand, marketing researches, the transfer of information between the logistics chain rings and coordination of information flow, the organization of uninterrupted supply of appropriate vehicles, stockholding costs reduction etc.*

**МАРТИРОС ПЕТРОСЯН**

*Доктор экономических наук, профессор, АГЭУ*

## **ПУТИ ВЫРАВНИВАНИЯ РЕГИОНАЛЬНЫХ ДИСПРОПОРЦИЙ В ОПЛАТЕ ТРУДА В РА**

*Ключевые слова:* *региональные диспропорции, оплата труда, уровень бедности, заработка плата, районные коэффициенты*

*Анализ уровня бедности по административно-территориальному делению РА и г. Еревану за последнее пятилетие показал, что он более высок в марзах, что является следствием более низкой реальной заработной платы. Это привело к деформации распределения производительных сил РА.*

*Для решения указанных проблем предлагается ввести в республике для бюджетных организаций районные коэффициенты совместно с коэффициентом за работу в высокогорных местностях. Практическое применение предлагаемых мер позволит предотвратить негативный процесс урбанизации в Армении.*

*Проблемы рационального распределения производительных сил всегда находятся в центре внимания правительств любых стран. Рыночные механизмы не всегда своевременно реагируют на эти процессы, порой имеющие стратегическое значение для развития страны в целом. С этих позиций трудно переоценить роль государственного регулирования, поскольку рациональное распределение производительных сил, наряду с*